3. Հանձնարարել Նոյեմբերյանի համանքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Նարեկ Դանիելյանին սույն որոշմամբ օրինականացված կառույցի՝ ավտոտնակ, նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկությամբ դիմել ինքնակամ կառույցն իրականացրած Մաքրուիի Հարությունի Ջաքարյանին՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով կառույց՝ 30960 ՀՀ դրամ արժեքով (25,6 x 1209) և նրա սպասարկման համար անհրաժեշտ 25,6 քմ հողամասը՝ 31260 ՀՀ դրամ արժեքով (25,6 x 1221) ձեռք բերելու համար:

4. Տրամադրվող հողամասի մակերեսը և սահմանները ընդունվում են սույն որոշմանը կից ներկայացված հողամասի հատակագծի մակերեսով և սահմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. Փետրվարի 28  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 թվականի N 220-Ա

**ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԲՆԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՈՒ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ  
ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածով և  
«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի համայնքային ծառայության առաջատար ու կրտսեր պաշտոնների անձնագրերը՝ համաձայն հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել 2022 թվականի փետրվարի 28-ի թիվ 57-Ա որոշմամբ հաստատված քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար ու կրտսեր պաշտոնների անձնագրերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԱՂԱՔԱՐՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 թվականի N 221-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ**

Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրի 11-056-0051-0006 և 11-056-0051-0007 կադաստրային ծածկագրերով միավորված անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, գյուղ Ջուջևան, 6-րդ փողոց, 5-րդ փակուղի, 1 բնակելի տուն, փոստային դասիչ 4116:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ԱՂԱԲԱՐՅԱՆ

2023 թ. փետրվարի 28  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅՄԵՐԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**28 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 թվականի N 222-Ա**

**ՆՈՅՄԵՐԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՆՈՅՄԵՐԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ  
ԱՃՈՒՐԴՎԱՃԱՌՔԻ՝ 27.02.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկլարովելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 69-րդ հոդվածներով, «Հրապարակային տակարկությունների մասին» օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, հիմք ընդունելով Նոյեմբերյանի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 27.02.2023 թվականի արձանագրությունները և հաշվի առնելով, որ հողամասերն ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. ՀՀ Տավուշի մարզ համայնք Նոյեմբերյան ք. Նոյեմբերյան Դպրոցականների փողոց 10/1 հողամաս հասցեում 11-004-0039-0197 կադաստրային ծածկագրով 0.02747 հա մակերեսով հողամասի՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, աճուրդ-վաճառքի հարթոց ճանաչել Հայկ Ալեքսանի Խաչիկյանին:

ա) Հաստատել աճուրդում վերջնական ձևավորված գինը՝ 550000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. ՀՀ Տավուշի մարզ համայնք Նոյեմբերյան Այրում ք. Բարեկամության փողոց 48 հողամաս հասցեում 11-012-0115-0078 կադաստրային ծածկագրով 0.00611 հա մակերեսով հողամասի՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, աճուրդ-վաճառքի հարթոց ճանաչել Ստյոպա Արամայիսի Աղաբաբյանին:

ա) Հաստատել աճուրդում վերջնական ձևավորված գինը՝ 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:

3. ՀՀ Տավուշի մարզ համայնք Նոյեմբերյան Նոյեմբերյան ք. հողամաս հասցեում, 11-004-0264-0022 կադաստրային ծածկագրով 0.71118 հա մակերեսով հողամասի՝ նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, աճուրդ-վաճառքի հաղթող ճանաչել Սարգիս Ռաֆիկի Ասատրյանին:

ա) Հաստատել աճուրդում վերջնական ձևավորված գինը՝ 570000 (հինգ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

4. ՀՀ Տավուշի մարզ համայնք Նոյեմբերյան Նոյեմբերյան ք. Կամոյի փողոց 5/9 հողամաս հասցեում, 11-004-0048-0060 կադաստրային ծածկագրով 0.00276 հա մակերեսով հողամասի՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, աճուրդ-վաճառքի հաղթող ճանաչել Արտավազդ Եվգենիի Մամյանին:

ա) Հաստատել աճուրդում վերջնական ձևավորված գինը՝ 56000 (հիսունվեց հազար) ՀՀ դրամ:

5. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Մալխասյանին՝ ապահովել աճուրդ-վաճառք կատարելու համար անհրաժեշտ փաթեթների կազմումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. փետրվարի 28  
ք. Նոյեմբերյան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavushilmta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 թվականի N 223-Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
27.02.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 03 ՆԻՍՏԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ  
ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ  
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, հիմք ընդունելով Նոյեմբերյանի համայնքապետարանի մրցույթային հանձնաժողովի 28.02.2023 թվականի թիվ 03 նիստի արձանագրությունները՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան Հաղթանակ քնակավայր 11-043-0106-0113 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.90514 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Արայիկ Սուրենի Մինասյանին:  
ա) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 5200 (հինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
2. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան Հաղթանակ քնակավայր 11-043-0106-0114 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 0.75927 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Արայիկ Սուրենի Մինասյանին:  
ա) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան Հաղթանակ քնակավայր 11-043-0106-0116 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 1.15487 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Արայիկ Սուրենի Մինասյանին:  
ա) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա համար՝ 6600 (վեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
4. ՀՀ Տավուշի մարզի համայնք Նոյեմբերյան Հաղթանակ քնակավայր 11-043-0106-0117 կադաստրային ծածկագրով տարածքում գտնվող 2.68181 հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝

- վարելահող) վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել Արայիկ Սուրենի Մինասյանին:  
ա) Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 24 տարի, վարձավճարը 1 /մեկ/ տարվա  
համար՝ 15300 (տասնհինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:  
5. Հանձնարարել Լոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության,  
անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր  
մասնագետ Գոհար Մալխասյանին՝ ապահովել վարձակալության տրամադրելու համար  
անհրաժեշտ փաթեթների կազմումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

  
Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. փետրվարի 28  
ք. Լոյեմբերյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 224-Ա

**ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ԻՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ  
ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33.1-րդ, 35-րդ, 35.1-րդ կետերով, հիմք ընդունելով, որ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Նոյեմբերյանի ավագանու 24.02.2023 թվականի թիվ 40-Ա որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի բնակիչ՝ կառույցն իրականացրած անձի՝ Աշոտ Միխայիլի Ղազինյանի 08.02.2023 թվականին տրված համաձայնությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող քաղաք Նոյեմբերյան, Վ. տեղյան փողոց, 3/3 ավտոտնակ հասցեում գտնվող 0.00391 հա մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 11-004-0039-0198, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) առկա օրինականացված և համայնքային սեփականություն ճանաչված ընդհանուր 52 քմ արտաքին մակերեսով կառույցը (ավտոտնակ) և կառույցի սպասարկման ու պահպանության համար նախատեսված 0.00391 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել կառույցն իրականացրած Աշոտ Միխայիլի Ղազինյանին:

2. Աշոտ Միխայիլի Ղազինյանը Նոյեմբերյանի համայնքապետարանի բյուջե պետք է վճարի՝

- 1) 62900 (52x1209) ՀՀ դրամը 900395101158 հաշվին, որպես կառույցի օտարման գին,
- 2) 47800 (39.1 x 1221) ՀՀ դրամ 900395101133 հաշվին, որպես հողամասի օտարման գին,
- 3) անշարժ գույքի պետական գրանցման համար համայնքի կողմից կատարված ծախս 13000 ՀՀ դրամ 900395101570 հաշվին:

3. Վճարելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ա. ԱՂԱԲԱՐՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tevush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 225-Ա

**ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին  
մասի 7-րդ կետով և 48-րդ հոդվածով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Նոյեմբերյան համայնքի 2023 թվականի բյուջեից հատկացնել դրամական նպաստներ  
Նոյեմբերյան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններով (այլ դասերին  
չպատկանող) 75 անձի, ընդհանուր 1.560.000 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուս  
հազար) ՀՀ դրամ գումար՝ ըստ հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. մարտի 02  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Նրեանյան 4  
/0266/22703, /0266/22393; noyemberyan-tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 226-Ա

**ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ԻՐ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ  
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33.1-րդ, 35-րդ, 35.1-րդ կետերով, հիմք ընդունելով, որ Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի 12-րդ փողոց 5/10 անասնաշենք հասցեում գտնվող կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի բնակիչ, կառույցն իրականացրած Սեյրան Ուսուրի Գրիգորյանի **01.03.2023 թվականի** համաձայնությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղ Ոսկեպար 12-րդ փողոց 5/10 անասնաշենք հասցեում գտնվող 0.04365 հա մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 11-049-0233-0001, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօկտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) առկա օրինականացված և համայնքային սեփականություն ճանաչված 345.32 քմ արտաքին մակերեսով կառույցը և կառույցի սպասարկման ու պահպանության համար նախատեսված 0.04365 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Սեյրան Ուսուրի Գրիգորյանին:

2. Կառույցի սպասարկման և պահպանման նպատակով հատկացված հողատարածքը և նրա վրա առկա շինությունը օտարել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշումով սահմանված գներով՝

1) 0.04365 հա մակերեսով հողամասի օտարման գինը կադաստրային արժեքին համապատասխան՝ 40350 ՀՀ դրամի չափով և վճարել պետության 900005290326 գանձապետական հաշվի համարին:

2) 345.32 քմ արտաքին մակերեսով կառույցի գինը՝ 314950 ՀՀ դրամ և վճարել Նոյեմբերյան համայնքի 900395101158 գանձապետական հաշվի համարին:

3) Վաճառքի գնին հավելվում է տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար համայնքի կողմից կատարված վճարումները՝ 13000 (տասներեք հազար) ՀՀ դրամ օտարման ընդհանուր գումարը՝ 900395101570 գանձապետական հաշվի համարին:

3. Կառույցն օգտագործել ըստ նպատակային և գործառնական նշանակության:

4. Գույքն օտարել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 912-Ն որոշմամբ նախատեսված ժամկետներում:

5. Վճարելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ԱՌԱՐԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅՆԵՐԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 227-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0130-0059 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, քաղաք Նոյեմբերյան, Երևանյան փողոց, 31 բնակելի տուն, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. մարտի 02  
ք. Նոյեմբերյան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 228-Ա

### ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ԻՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33.1-րդ, 35-րդ, 35.1-րդ կետերով, հիմք ընդունելով, որ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Նոյեմբերյանի ավագանու 24.02.2023 թվականի թիվ 39-Ա որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ գյուղի բնակիչ՝ կառույցն իրականացրած անձի՝ Մխիթար Հրանտի Հարությունյանի (և/ք՝ 002274223, տրված 31.03.2014 թվականին, 047-ի կողմից) 17.02.2023 թվականին տրված համաձայնությունը՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող համայնք Նոյեմբերյան, գ. Հաղթանակ, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք 9/5 հասցեում գտնվող 0.18 հա մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 11-043-0178-0020, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) առկա օրինականացված և համայնքային սեփականություն ճանաչված ընդհանուր 268.78 քմ արտաքին մակերեսով կառույցը (անասնաշենք) և կառույցի սպասարկման ու պահպանության համար նախատեսված 0.18 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել կառույցն իրականացրած Մխիթար Հրանտի Հարությունյանին:

2. Մխիթար Հրանտի Հարությունյանը Նոյեմբերյանի համայնքապետարանի բյուջե պետք է վճարի՝

1) 339210 (268.78x1262) ՀՀ դրամը 900395102131 հաշվին, որպես կառույցի օտարման գին,

2) 824890 ((806.34 x 218.7)+(993.66 x 653.4)) ՀՀ դրամ 900395102032 հաշվին , որպես հողամասի օտարման գին,

3) անշարժ գույքի պետական գրանցման և միասնական տեղեկանքի համար համայնքի կողմից կատարված ծախս 36000 ՀՀ դրամ 900395101570 հաշվին:

3. Վճարելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. մարտի 02  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅՆԵՐԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 229-Ա**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ**

Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի 11-043-0006-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, գյուղ Հաղթանակ, 4-րդ փողոց, 19 հողամաս հասցեում, փոստային դասիչ 4111:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. մարտի 02  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 230-Ա

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումով և հաշվի առնելով քաղաքացի Միեր Գառնիկի Շահումյանի 20.12.2022 թվականի հայտը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**

Նոյեմբերյան համայնքի Բերդավան բնակավայրի 11-019-0006-0003 կադաստրային ծածկագրով 0.12944 հա մակերեսով հողամասում բնակելի առանձնատան կառուցման համար, Միեր Գառնիկի Շահումյանին տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. մարտի 02  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅՆԵՐԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 231-Ա

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումով և հաշվի առնելով քաղաքացի Արթուր Մարտիկի խաչիկյանի 28.02.2023 թվականի հայտը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ**

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0171-0033 կադաստրային ծածկագրով 0.0048 հա մակերեսով հողամասում ավտոտնակի կառուցման համար, Արթուր Մարտիկի խաչիկյանին տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. մարտի 03  
ք. Նոյեմբերյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 232-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 06.12.2022 թվականի թիվ 231-Ն որոշումը և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Դեբեդավան բնակավայրում գործող «Լիզիա Ներսիսյան» ԱԶ-ի պատասխանատու անձի 28.02.2023 թվականի դիմում-հայտը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Թույլատրել «Լիզիա Ներսիսյան» ԱԶ-ին 03.01.2023 թվականից մինչև 30.12.2023 թվականը Նոյեմբերյան համայնքի գյուղ Դեբեդավան փ.6, 2.14 հասցեում զբաղվել ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքով:
2. Որոշումը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ա. ԱՐԱՐԱՐՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 233-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 06.12.2022 թվականի թիվ 231-Ն որոշումը և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Դեքտղավան բնակավայրում գործող «Ջուլետա Ջախարյան» ԱԶ-ի պատասխանատու անձի 28.02.2023 թվականի դիմում-հայտը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Թույլատրել «Ջուլետա Ջախարյան» ԱԶ-ին 03.01.2023 թվականից մինչև 30.12.2023 թվականը Նոյեմբերյան համայնքի գյուղ Դեքտղավան փ.8, 2 2/1 հասցեում զբաղվել ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքով:
2. Որոշումը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 234-Ա

**ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 06.12.2022 թվականի թիվ 231-Ն որոշումը և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Բազրատաշեն բնակավայրում գործող «Լալաևա Յուլիանա» ԱԶ-ի պատասխանատու անձի 28.02.2023 թվականի հայտը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Թույլատրել «Լալաևա Յուլիանա» ԱԶ-ին 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը Նոյեմբերյան համայնքի գյուղ Բազրատաշեն փ.19 շ. 17 հասցեում զբաղվել հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:
2. Որոշումը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. մարտի 03  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 235-Ա**

**ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 06.12.2022 թվականի թիվ 231-Ն որոշումը և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքում գործող «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի պատասխանատու անձի 02.03.2023 թվականի դիմում-հայտը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Թույլատրել «Պրես Ստենդ» ՍՊԸ -ին 01.01.2023 թվականից մինչև 31.12.2023 թվականը Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Երևանյան փ. 4/5 հասցեում զբաղվել ծխախոտի վաճառքով:
2. Որոշումը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. մարտի 03  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 236-Ա**

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 06.12.2022 թվականի թիվ 231-Ն որոշումը և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Բաղանիս բնակավայրում գործող «Ջեմմա Ղուկասյան» ԱԶ-ի պատասխանատու անձի 16.02.2023 թվականի դիմում-հայտը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Թույլատրել «Ջեմմա Ղուկասյան» ԱԶ-ին 01.01.2023 թվականից մինչև 30.12.2023 թվականը Նոյեմբերյան համայնքի գյուղ Բաղանիս փ.1, 2.104 հասցեում զբաղվել ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքով:
2. Որոշումը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2023 թ. մարտի 03  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 237-Ա**

**«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ  
ԳՈՎԱԶԴԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 12-րդ կետով, «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 06.12.2022 թվականի թիվ 231-Ն որոշումը և հաշվի առնելով «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ -ի 27.02.2023 թվականի հայտը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Թույլատրել «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի Երևանյան 5 հասցեում տեղադրել այլ արտաքին գովազդ՝ 4 քմ ընդհանուր մակերեսով, 1 տարի ժամկետով, 1 քմ մակերեսի համար վճարելով ամսական 1125 ՀՀ դրամ գումարի չափով:
2. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Մանվել Քեշիշյանին սահմանված կարգով ձևակերպել գովազդի թույլտվության համար անհրաժեշտ փաստաթղթերը:
3. Որոշումը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 238-Ա**

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 06.12.2022 թվականի թիվ 231-Ն որոշումը և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Բազրատաշեն բնակավայրում գործող «Նվեր Տոնոյան» ԱԶ-ի պատասխանատու անձի 02.03.2023 թվականի դիմում-հայտը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Թույլատրել «Նվեր Տոնոյան» ԱԶ-ին 01.01.2023 թվականից մինչև 31.12.2023 թվականը Նոյեմբերյան համայնքի գյուղ Բազրատաշեն փ. 10 շ. 1/1 հասցեում զբաղվել ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքով:
2. Որոշումը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ա.ԱՂԱԲԱՐՅԱՆ**

2023 թ. մարտի 03  
ք. Նոյեմբերյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅՆԵՐԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4  
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 ՄԱՐՏԻ 2023 թվականի N 239-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

2023 թվականի ապրիլի 4-ին հայտարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի պաշտակազմի համայնքային ծառայության 2.1-1, 2.3-1, 2.3-2, 2.1-3, 2.3-6, 2.3-10, 2.3-9, 2.1-5 ծածկագրերով թափուր պաշտոնների մրցույթ:

1. Աշխատակազմի քարտուղարին՝ մրցույթների մասին հայտարարությունը տեղադրել Նոյեմբերյանի համայնքապետարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև  
<https://www.azdarar.am>

հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Մրցույթների կայացման սկիզբը հայտարարել 2023 թվականի ապրիլի 4-ը ժամը 11:00-ն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ա. ԱՂԱՐԱՐՅԱՆ**

